ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

01 հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Գալստյան,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի VIII գլուխը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը ներկայացնում է գրավոր առաջարկ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին (Պ-168-31.05.2019-ՊԻ-011/0) և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (Պ-168[1]-31.05.2019-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Առդիր՝ 05 թերթ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝ **ԳԵՎՈՐԳ ԳՈՐԳԻՍՅԱՆ**

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2019 թվականի հուլիսի 01-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին (Պ-168-31.05.2019-ՊԻ-011/0) և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (Պ-168[1]-31.05.2019-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկություն:

126 Է. Մարուքյան _____	***122 Ս. Գրիգորյան*** _____
125 Գ. Գորգիսյան _____	***123 Ս. Ալեքսանյան*** _____
115 Ա. Բաբաջանյան _____	***124 Գ. Բաղդասարյան*** _____
116 Ա. Խաչատրյան _____	***127 Մ. Թանդիլյան*** _____
117 Ա. Սամսոնյան _____	***128 Է. Անդրեասյան*** _____
118 Հ. Բաբայան _____	***129 Ռ. Ստեփանյան*** _____
119 Ա. Եղիազարյան _____	***130 Տ. Սիմոնյան*** _____
120 Ա. Կոստանյան _____	***131 Հ. Այվազյան*** _____
121 Կ. Սիմոնյան _____	***132 Ս. Մինասյան*** _____

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

01 հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի Պետական-իրավական և
Մարդու իրավունքների պաշտպանության
հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի պատգամավոր,
Պետական-իրավական հարցերի մշտական
հանձնաժողովի նախագահի տեղակալ
ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն գործընկերներ,

Ստորև ներկայացնում ենք խմբակցության առաջարկությունը «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին (Պ-168-31.05.2019-ՊԻ-011/0) և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (Պ-168[1]-31.05.2019-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ «Նախագծերի փաթեթ») վերաբերյալ.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է Ազգային ժողովի նախագահին վերապահել Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցելու իրավունք: Ի հիմնավորումն այս առաջարկի՝ նշվում է հետևյալը.

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

«Ազգային ժողովը և նրա մարմինները ունեն հետևյալ բացառիկ լիազորությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են Անվտանգության խորհրդի լիազորությունների իրականացմանը, այն է՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանմանը, Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և սահմանների անձեռնմխելիության հարցերի քննարկմանը՝

1) պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունումը (Սահմանադրության 118-րդ հոդվածի 1-ին մաս).

2) ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ Ազգային ժողովի հատուկ նիստի գումարումը (Սահմանադրության 119-րդ հոդվածի 2-րդ մաս): Ռազմական դրությունը վերացնելու կամ ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունումը (Սահմանադրության 119-րդ հոդվածի 3-րդ մաս).

3) արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ Ազգային ժողովի հատուկ նիստի գումարումը (Սահմանադրության 120-րդ հոդվածի 2-րդ մաս): Արտակարգ դրությունը վերացնելու կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունումը (Սահմանադրության 120-րդ հոդվածի 3-րդ մաս).

4) վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով հանրաքվե նշանակելու մասին Ազգային ժողովի որոշման ընդունումը (Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մաս)

5) համապատասխան ոլորտներին վերաբերվող օրենքների ընդունումը.

6) Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովների կողմից համապատասխան ոլորտներին վերաբերվող օրենքների կատարման ընթացքի

վերահսկողությունը («Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ).

7) համապատասխան ոլորտների խնդիրների վերաբերյալ խմբակցությունների հարցապնդումները (Սահմանադրության 113-րդ հոդված), ինչպես նաև Կառավարության անդամներին պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը (Սահմանադրության 112-րդ հոդված):»:

Այստեղ, ինչպես երևում է, խոսքը վերաբերում է ամբողջ Ազգային ժողովին, այլ ոչ թե միայն Ազգային ժողովի նախագահին: Եվ, ըստ այդմ, պարզ չէ, թե ինչու է առաջարկվում Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցելու իրավունքը վերապահել բացառապես Ազգային ժողովի նախագահին, եթե Ազգային ժողովն ինքնին միատարր չէ, այլ Սահմանադրության ուժով ընդգրկում է վստահության համապատասխան քվե ստացած քաղաքական ուժերը:

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական երկիր է: Խորհրդարանական երկրում առաջնային մանդատ կրող միակ մարնինն Ազգային ժողովն է, որը բաղկացած է ժողովրդի կամքով ձևավորված խմբակցություններից, որոնք, համաձայն Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրենց մասնակցությամբ ***նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:***

Ըստ այդմ, գտնում ենք, որ անհրաժեշտ է Անվտանգության խորհրդի նիստերին մասնակցելու, Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի և քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու իրավունք վերապահել ոչ միայն Ազգային ժողովի նախագահին, այլ նաև Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարներին:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծերի փաթեթում կատարել համապատասխան լրացումներ, մասնավորապես.

- «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին (Պ-168-31.05.2019-ՊԻ-

011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը լրացնել նոր հոդվածով.

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով.

«5. Խմբակցության ղեկավարն իրավունք ունի մասնակցելու Անվտանգության խորհրդի նիստերին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելու Անվտանգության խորհրդի նիստի օրակարգի և քննարկվելիք փաստաթղթերի վերաբերյալ:»:

- «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (Պ-168[1]-31.05.2019-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը խմբագրել հետևյալ կերպ.

«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 07-ի ՀՕ-145-Ն օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «կարող են մասնակցել նաև վարչապետի հրավիրած այլ անձինք» բառերը փոխարինել «մասնակցելու իրավունք ունի Ազգային ժողովի նախագահը, *Ազգային ժողովի խմբակցությունների ղեկավարները,* ինչպես նաև կարող են մասնակցել վարչապետի հրավիրած անձինք» բառերով,

2) 10-րդ մասում «անդամներն» բառը փոխարինել «անդամները, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահն *ու խմբակցությունների ղեկավարներն*» բառերով,

3) 11-րդ մասը «անդամներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահին *և խմբակցությունների ղեկավարներին*» բառերով:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝ **ԳԵՎՈՐԳ ԳՈՐԳԻՍՅԱՆ**